

Ա. ԽԱՅԵԼՅԱՆ

«ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՆԻՖԵՍՏ»-Ի ՀԱՅԵՐԵՆ ՔԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուղիղ հարյուր տարի առաջ, 1848 թվին, միջազգային պրոլետարիատի մեծ առաջնորդներ, գիտական կոմունիզմի հիմնադիրներ՝ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը հրապարակեցին իրենց անմահ երկը՝ «Կոմունիստական պարտիայի մանիֆեստը»:

Մարքսի և Էնգելսի կողմից գրված կոմունիստական պարտիայի աղյուսակի հարյուր տարի առաջ ապացուցեց կապիտալիզմի կործանման անխուսափելիությունը, բանվոր դասակարգի ու բոլոր շահագործվողների իշխանություն, պրոլետարիատի դիկտատուրայի միջոցով սոցիալիստական-կոմունիստական հասարակություն ստեղծելու անհրաժեշտությունը:

«Մանիֆեստ»-ը, որ 1848 թվականի ուղուցիայի օրերին ռուսիայի նման պայթեց տիրապետող դասակարգերի գլխին, դարձավ երկրագնդի բոլոր բանվորների դասակարգային և քաղաքական պայքարի ուղեցույցը. նրա «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» լոզունգը փայլատակեց աշխարհի բոլոր տեղյուկներում կապիտալիզմի դեմ պայքարի բարձրագույն պրոլետարական բանակների դրոշմների վրա որպես կապիտալիզմի տապալումը. կոմունիզմի հաղթանակը նախագուշակող մարտական մի կոչ:

«Այս փոքրիկ գրքույկը — գրում է Վ. Ի. Լենինը, տալով «Մանիֆեստ»-ի բնութագիրը, — արժե ամբողջ հատորներ. նրա ոգով ապրում և շարժվում է մինչև այժմ քաղաքակիրթ աշխարհի կազմակերպված և պայքարող ամբողջ պրոլետարիատը»¹ «Այս երկի մեջ հանճարեղ պարզությամբ և պայծառությամբ պատկերված է նոր աշխարհայացքը, հետևողական մատերիալիզմը, որ նաև սոցիալիստական կյանքի բնագավառն է ընդգրկում. դիալեկտիկան՝ իբրև ամենից բազմակողմանի և խոր ուսմունք զարգացման մասին, դասակարգային պայքարի և պրոլետարիատի նոր, կոմունիստական հասարակություն ստեղծողի՝ համաշխարհային պատմական ուղուցիոն, դերի թեորիան»²:

Հարյուր տարվա ընթացքում «Կոմունիստական պարտիայի մանիֆեստ»-ը հազարավոր հրատարակություններ է ունեցել. լույս է տեսել երկրագնդի բազմաթիվ ժողովուրդների լեզուներով:

1848—1850 թվականներին գերմաներեն, ֆրանսերեն և անգլերեն լեզուներով լույս տեսնելուց հետո, «Կոմունիստական մանիֆեստ»-ը սկսվել է թարգմանվել և հրատարակվել իտալերեն, ռուսերեն, իսպաներեն, լեհերեն, դանիերեն, հայերեն, վրացերեն և ուրիշ շատ լեզուներով:

Ռուսերեն լեզվով «Կոմունիստական մանիֆեստ»-ի առաջին հրատարա-

¹ В. И. Ленин — Соч., т. 1, стр. 418.

² В. И. Ленин — Соч., т. XVIII, стр. 6.

կոալիցիան Բակունինի թարգմանությամբ լույս է տեսել 1863 թ. Ժրնեվում, Դերգենի «КОЛОКОЛ» լրագրի տպարանում: Երկրորդ հրատարակությունը կատարվել է 1882 թ. Կ. Վ. Պլեխանովի թարգմանությամբ:

Հայերեն լեզվով «Մանիֆեստ»-ի առաջին թարգմանությունը և հրատարակության փորձերը սկսվել են գեղև 1887 թվից, Կոստանդնուպոլսում: Այդ մասին 1888 թ. հունվարի 30-ին լոնդոնում «Մանիֆեստ»-ի անգլերեն հրատարակության համար գրած առաջաբանում խոսում է Ֆ. Էնգելսը. «Հայերեն թարգմանությունը, — հայտնում է Էնգելսը, — որ պետք է մի քանի ամիս առաջ Կոստանդնուպոլսում տպագրվեր, ինչպես ինձ հաղորդել են, լույս չի տեսել»¹: Եվ այնուհետև շարունակելով առաջաբանի շարադրանքը, թվարկում է «Մանիֆեստ»-ի տարբեր լեզուներով կատարված թարգմանությունների, հրատարակությունների և կրկնահրատարակությունների հարաճուն ընթացքը, և դիտելով այն որպես իր ժամանակաշրջանի բանվորական շարժման պատմության անդրադարձման կոնկրետ մի արտահայտություն, Էնգելսը հայերեն թարգմանության մասին հիշելուց անմիջապես հետո, գրում է. «Այլ լեզուներով հետագա հրատարակությունների մասին ես լսել եմ, սակայն չեմ տեսել... Ներկայումս նա («Մանիֆեստ»-ը — Ե. Կ.) անկասկած, ամբողջ սոցիալիստական դրականության ամենատարածված, ամենամիջազգային երկն է, հանդիսանում է այն ընդհանուր ծրագիրը, որ ընդունված է միլիոնավոր բանվորների կողմից՝ Սիբիրից սկսած մինչև Կալիֆորնիա»:

1890 թվականի մայիսի 1-ին Ֆ. Էնգելսը գերմաներեն մի նոր հրատարակության առթիվ գրած առաջաբանում, իր ձեռքով որոշակիորեն արձանագրելով «Կոմունիստական մանիֆեստ»-ի հայերեն առաջին թարգմանության և հրատարակության փորձի տարեթիվը, հայտնում է հետևյալ մանրամասնությունները.

«Իբրև կուրյոզ, — գրում է Էնգելսը, — հիշատակելու է, որ 1887 թվականին Կոստանդնուպոլսի մի հրատարակչի առաջարկված է եղել «Մանիֆեստ»-ի հայերեն թարգմանության ձեռագիրը. սակայն այդ բարեհոգին քաջություն չի ունեցել տպագրելու մի աշխատություն, որը կրում էր Մարքսի անունը. նա ավելի լավ էր համարել, որ իբրև հեղինակ հանդես գա ինքը թարգմանիչը. մի խորհուրդ, որից, վերջինս, իհարկե, պիտի հրաժարվեր»²:

«Մանիֆեստ»-ի հայերեն թարգմանության փաստը արտակարգ հետաքրքրություն է ներկայացնում մարքսիստական հայ հասարակական մտքի զարգացման և վարքսիզմի կյսսիկների հայերեն հրատարակությունների պատմության մեջ: Ուշագրավ երևույթ է, որ Մարքսի մահվանից ընդամենը 4 տարի հետո, Էնգելսի կենդանության օրոք, հայերեն լեզվով թարգմանվել և հրատարակության փորձ է կատարվել միջազգային պրոլետարիատի մեծ ուսուցիչների՝ Մարքսի և Էնգելսի ծրագրային այդ անմահ երկր:

Դժբախտաբար հրատարակչի ցուցաբերած վախկոտությունը սուլթանա-

¹ Կ. Մարքս և Ֆ. Էնգելս — «Կոմունիստական պարտիայի մանիֆեստը», Պետհրատ, 1938 թ., էջ 19.

² Նույն տեղում, էջ 19—20.

³ К. Маркс и Ф. Энгельс — «Коммунистический манифест», Госиздат, Москва, 1923 г., стр. 62.

կան քննդուրայից արգելք է հանդիսացել «Կոմունիստական մանիֆեստ»-ի հայերեն այդ առաջին թարգմանության հրատարակությանը:

90-ական թվականներին «Կոմունիստական մանիֆեստ»-ի հայերեն թարգմանության և հրատարակության մի շարք նոր փորձեր են կատարվել արտասահմանում, մասնավորապես ժրնեմում և Շտուտգարտում սովորող առանձին հայ ուսանողների և հասարակական գործիչների կողմից, որոնք, կրելով մարքսիստական պրոպագանդայի ազդեցությունը, ցանկացել են հայերեն լեզվով թարգմանել Մարքսի, Էնգելսի և նրանց աշակերտների մի շարք աշխատությունները:

«Կոմունիստական մանիֆեստ»-ի հայերեն թարգմանության մի քանի փորձեր տպագրվել են 1894 թ. Աթենքում լույս տեսնող հնչակյան «Բաղափար» հանդեսի հոգիս—սեպտեմբեր ամիսների համարներում:

«Գաղափար»-ի էջերում տպագրված «Մանիֆեստ»-ի հասկածները պարունակում էին թարգմանական լուրջ սխալներ, այդ ընդհանրապես անորակ մի թարգմանություն էր, բայց արժանի է հիշատակության որպես «Կոմունիստական մանիֆեստ»-ի հայերեն թարգմանության առաջին անավարտ հրատարակության մի փորձ:

«Մանիֆեստ»-ի 90-ական թվականների հայերեն թարգմանություններից ուշագրավ է 1894 թ. Շտուտգարտում սովորող երևանցի հայ ուսանող Հովսեփ Աթաբեկյանի թարգմանությունը: Թարգմանիչը, ավարտելով իր աշխատանքը, 1894 թ. նոյեմբերի 1-ին Շտուտգարտից հատուկ նամակով դիմում է Լոնդոն՝ Ֆրիդրիխ Էնգելսին և խնդրում նրանից առաջաքան գրելու «Մանիֆեստ»-ի իր թարգմանության հրատարակության համար: Ի պատասխան այդ խնդրանքի Ֆ. Էնգելսը 1894 թ. նոյեմբերի 23-ին Հ. Աթաբեկյանին գրում է մի նամակ, որը հայ իրականության մեջ մարքսիստական մտքի զարգացման, ձևավորման, ինչպես և հայկական հարցի պատմության լուսաբանման համար, հանդիսանում է չափազանց կարևոր մի փաստաթուղթ:

Ֆ. Էնգելսի այդ նամակի գերմաներեն բնագիրը առաջին անգամ հրատարակվել է 1903 թ. Շտուտգարտում լույս տեսնող «Dokumentus des Sozialismus» գերմանական պարբերականի էջերում, որից հետո թարգմանաբար սրտատպվել է ԴԱԴԹՊ Կովկասյան Միության Կոմիտեի հայերեն ու վրացերեն լեզուներով Թիֆլիսում լույս տեսնող անլեգալ բուլղերկյան «Պրոլետարիատի կռիվ» («Պրոլետարիատիս բրձուլ») օրգանի ապրիլ—մայիս N 2—3-ի էջերում (վրացերենի նույն ամիսների՝ 5—6 համարներում):

Հիշյալ նամակից պարզ երևում է, որ Հ. Աթաբեկյանը իր ժամանակաշրջանի մի շարք ուրիշ հայ ուսանողների նման, գտնվելիս է եղել մարքսիստական գաղափարների որոշ ազդեցության տակ, բայց հիմնականում կանգնած է եղել հայ բուրժուա-նազիռնալիստական հոսանքների քաղաքական սլլատֆորմի վրա, հոսանքներ, որոնք աղերսում էին հայկական հարցի լուծումը հվրոպական և դարական դիպլոմատիայից, քաղաքական կուրուքուն հան-

¹ «Dokumentus des Sozialismus», II—III հատոր, էջ 562—563.

«Պրոլետարիատի կռիվ»-ը թյուրիմացաբար Շտուտգարտից Ֆ. Էնգելսին նամակ գրող ուսանող Հ. Աթաբեկյանին չփոթել է Էնգելսի լուրջ խմբագիր Ա. Նազարբեկյանի հետ Այդ թյուրիմացությունը հետադառում մի շարք ուսումնափորձների կողմից նկատվել և ուղղվել է մանավանդ որ Աթաբեկյանի Էնգելսին գրած նամակը գտնվել է և այժմ պահվում է Մարքս-Էնգելս-Լենինի Խնամատուում:

դեպ բերելով, չէին տեսնում ցարիզմի և եվրոպական բուրժուական պետությունների հակադիր շահերի բախումը Թյուրքիայում:

Աթաբեկյանն իր նամակում արտահայտելով իր և յուրայինների ցանկությունը, նպատակ է ունեցել Ֆ. Էնգելսից «հայանպաստ» փաստաթուղթ ստանալ և հրատարակել որպես «Մանիֆեստ»-ի առաջաբան, բայց Էնգելսը հեռատեսությամբ, պատճառաբանելով, որ հայերեն լեզվին և առաջադրված հարցին ծանոթ չէ, հրաժարվել է առաջաբան գրելուց:

«Կոմունիստական մանիֆեստ»-ի 1894 թվի հայերեն այդ թարգմանությունը ևս չհրատարակվեց:

Անցյալ դարի վերջին տասնամյակում, Ռուսաստանում, նրա հետ նաև Անդրկովկասում, կապիտալիստական արդյունաբերության զարգացման զուգընթաց աճում է բանվորական շարժումը, արագ կերպով ծավալվում է մարքսիզմի պրոպագանդան:

Անդրկովկաս են թափանցում Մարքսի-Էնգելսի-Լենինի աշխատությունները, որոնք արտակարգ դեր են խաղում բանվորների դասակարգային գիտակցության արթնացման, ուղղուցիտ շարժումների կազմակերպման գործում:

1896 թվականից սկսած ընկեր Ստալինը ակտիվորեն զլխավորում էր Թիֆլիսի ուսանողական և բանվորական մարքսիստական ընդհատակյա խմբակների ողջ աշխատանքը, համառորեն ուսումնասիրում էր Մարքսի «Կապիտալը», Մարքսի-Էնգելսի «Կոմունիստական պարտիայի մանիֆեստ»-ը, Լենինի աշխատությունները: Հմտորեն տիրապետելով ուղղուցիտ մարքսիզմի տեսությանը, ղեկավարելով իր հիմնադրած Անդրկովկասյան ուղղուցիտ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների գործունեությունը, ընկեր Ստալինը 1898 թ. գրեց Թիֆլիսի «Մարքսիստական բանվորական խմբակների պարապմունքների ծրագիրը», որը լայն թափ հաղորդեց մարքսիստական սոցիալ-դեմոկրատական գաղափարների տարածմանը:

Ընկեր Ստալինի, Կեցխովելու, Մուլուկիձեի և սոցիալ դեմոկրատ առաջավոր բանվորների ղեկավարությամբ գործող ուսանողական, բանվորական խմբակների ամենասիրելի ձեռնարկներից մեկն էր Մարքսի-Էնգելսի «Կոմունիստական պարտիայի մանիֆեստ»-ը, որի շնչով և ոգով էին գրվում անլեզալ բանվորական առաջին թուղթիկները, ի ժամյա բանվորական օրվա պահանջով կազմակերպվում էին գործադուլներ, որոնք աստիճանաբար քաղաքական թուղթ էին ստանում. «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք — «Մանիֆեստ»-ի մարտական կոչով ոտքի էին հանվում Անդրկովկասի բազմազգ պրոլետարիատը և աշխատավորությունը, ընդգեմ բուրժուազիայի և ինքնակալության:

Ընկեր Ստալինի զլխավորած ուղղուցիտ մարքսիզմի պրոպագանդան թափանցեց և լայն արձագանք գտավ նաև հայ պրոլետարիատի և երիտասարդ ուղղուցիտ ինտելիգենցիայի շրջաններում: Ստեփան Շահումյանը առաջիններից մեկն էր, որ դեռևս Թիֆլիսի ռեալական դպրոցի աշակերտական նստարանից ջերմորեն արձագանքեց այդ պրոպագանդային: Նա 1898—1900 թվականներից իրեն նվիրեց մարքսիստական գրականության ուսումնասիրությանը: Շահումյանը այդ շրջանում Թիֆլիսում ղեկավարում էր «Միաձայն» աշակերտական կիսալեզալ խմբակները, անց էր կացնում ժողովներ, դասախոսություններ: Հիշատակության արժանի են հատկապես «Կոմունիստական

մանիֆեստի» մասին նրա կարգադրած դասախոսությունները այդ խմբագրությանը, որոնց մասին խմբակի անդամներից Ռուբեն Աեվոնդյանը իր հուշերում պատմում է.

«Շահումյանի հաջորդ դասախոսությունը, որին ես ներկա գտնվեցի, Կոմունիստական պարտիայի մանիֆեստ»-ի մասին էր:

Շահումյանը, ինչպես միշտ, հավաքույթին եկավ ճիշտ նշանակված ժամանակին: Այս անգամ նա իր գրպանից հանեց ոչ մեծ ծավալով, մութ գույնի կազմով գրքույկ: Այդ՝ ընդհատակյա հրատարակությամբ լույս տեսած «Կոմունիստական պարտիայի մանիֆեստ»-ի էր... Պատմելով Մարքսին ու Էնգելսին իրար հետ կապող մեծ բարեկամության մասին և թե ինչպես նրանք միասին աշխատում էին իրենց անմահ երկերի ստեղծագործման վրա, զեկուցողը այնուհետև համառոտակիորեն կանգ առավ «Մանիֆեստ»-ի պատմության վրա և թերթելով գրքույկը, մեզ ծանոթացրեց նրա բովանդակության հետ: 1

Ընկեր Ստալինը ռուսական առաջին ռեպուբլիկայի արշալույսին հիմնադրելով և գլխավորելով Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատական լենինյան-խակրայական կազմակերպությունները, իր զինակիցների և առաջավոր բանվորների հետ միասին, «Իսկրա»-ի մարտական փորձի հիման վրա, ընդհուպ ձեռնամուխ եղավ Անդրկովկասում ընդհատակյա տպարանների և ազգային լեզուներով մարքսիստական գրականության ու մամուլի լայն մասշտաբով հրատարակության գործին: Այսպիսով «Կոմունիստական պարտիայի մանիֆեստ»-ի թարգմանության և հրատարակության պատմության մեջ սկսվում է մի նոր էտապ: Ձեռնարկումներ են կատարվում հենց Անդրկովկասում «Մանիֆեստ»-ը վրացերեն և հայերեն լեզուներով թարգմանելու և հրատարակելու ուղղությամբ:

1901 թվականին Թիֆլիսում «Մանիֆեստ»-ը հայերեն թարգմանելու մի նոր փորձ է կատարվում: Թարգմանությունը կատարվում է Գ. Վ. Պլեխանովի 1882 թ. ռուսերեն թարգմանության 2-րդ հրատարակությունից: 1902—1903 թվականներին ժրնեվում արևմտահայ բարձրագույն երեան է գալիս մի ուրիշ թարգմանություն, կատարված Պոլ Լաֆարգի ֆրանսերեն թարգմանությունից, սակայն այս երկու թարգմանությունները նույնպես մնում են անտիպ:

«Կոմունիստական պարտիայի մանիֆեստ»-ի հայերեն լրիվ թարգմանությունը և հրատարակությունը կատարվում է Վ. Ի. Լենինի ջանքերով, ժրնեվում, 1903—1904 թվներին, Ստեփան Շահումյանի ամենամերձավոր և ակտիվ մասնակցությամբ: Ընկեր Ստալինի ղեկավարությամբ Անդրկովկասում դործող լենինյան-խակրայական կազմակերպությունները ազգային լեզուներով մարքսիստական գրականության մեծ պահանջ էին առաջադրում: Կովկասում ստեղծված ընդհատակյա հրատարակություններին զուգընթաց, 1903 թ. Վ. Ի. Լենինի անձնական նախաձեռնությամբ ժրնեվում ՌՍԴԲԳ Կենտրոնական Կոմիտեի հրատարակչության կից, ստեղծվում է Վրացերեն և հայերեն լեզուներով պարտիական սոցիալ-դեմոկրատական գրականություն հրատարակող մասնաժողով: Այդ մասնաժողովը, որը անվանվում էր նաև Կոմիսիա, զբաղվում էր անլեզալ ռուսուցիտն գրականության հրատարակությամբ, որը

1 ԳՄ ԳԽ. Պատմական թանգարան, Ռ. Ղեռնդյանի հուշերը ՎՍ. Շահումյանի մասին, էջ 10:

գաղտնի ճանապարհներով Անդրկովկաս բերվելով տարածվում էր բանվորական շրջաններում:

Վ. Ի. Լենինը հայերեն հրատարակությունների վրա աշխատելու համար հրավիրում է Ստեփան Շահումյանին, որը մինչև այդ Լենինին գիտեր միայն հեռվից: Շահումյանը մեծ հաճությամբ և պարտաճանաչությամբ կատարում է Լենինի բոլոր հանձնարարությունները:

«Ընկեր Շահումյանին — Սուրենին (Շահումյանի պարտիական ծածկանունն էր — Ն. Խ.) — ասում է Կրուպսկայան, — մենք վաղուց էինք ճանաչում: Երկրորդ համագումարից անմիջապես հետո նա հարեց Բոլշևիկներին»:¹

Շահումյանի գրական և ռևոլյուցիոն գործունեությունը այստեղ յոր թափ է ստանում: Որպես աննկուն Բոլշևիկ, նա ակտիվ կերպով մասնակցում է ներպարտիական ֆրակցիոն պայքարին, «Հրատարակչական մասնաժողովում» կատարում է խմբագրական և թարգմանչական շատ պատասխանատու և կարևոր աշխատանքներ:

Շահումյանը, աշխատելով «Հրատարակչական մասնաժողովում», պարտիայի և հայ պրոլետարիատի առաջ իր առաջնահերթ պարտքն է համարում հրատարակել «Կոմունիստական մանիֆեստ»-ի հայերեն լրիվ ու անթերի թարգմանությունը: Այդ նպատակով էլ նա ձեռնամուխ է լինում թարգմանության աշխատանքին: 1903 թվականին նրա կողմից կատարած թարգմանությունը հիմնականում արդեն ավարտված էր. անշուշտ այդ նա կարողացավ կատարել գերմաներեն և հայերեն լեզուները լավ իմանալով, հմտորեն տիրապետելով մարքսիստական տեսությանը:

Թարգմանության ավարտումից հետո սկսվեցին տպագրության ավելի ցան տանջալի մանրակրկիտ աշխատանքները:

Չնայած իր վատառողջ վիճակին, տպագրության ամբողջ ընթացքում Շահումյանը տպարանում, գրաշարների կողքին, թեքված «Մանիֆեստ»-ի շարվածքի ու տառերի կասսաների վրա, ուղղում, շտկում էր օտիսկները, հետևյալում էր տպագրության պրոցեսին:

1904 թ. օգոստոսին, հայ իրականության մեջ առաջին անգամ, Բոլշևիկյան հրատարակությամբ, Մարքսի և Էնգելսի երեք առաջաբաններով, լույս տեսավ «Կոմունիստական պարտիայի մանիֆեստ»-ի հայերեն թարգմանությունը: Անհրաժեշտ ենք համարում միաժամանակ հիշատակելու, որ այդ հրատարակության մեջ օգտագործվել են նաև անցյալում մեր հիշատակած անտիպ մնացած թարգմանությունները, որոնց ձեռագիր տեքստերը Նահումյանը հավաքել և գրել էր ՌՍԴԲԳ ԿԿ-ի հրատարակչության տրամադրության տակ: Այդ մասին 1904 թ. «Մանիֆեստ»-ի հայերեն հրատարակության առաջարանում, թարգմանիչը տալիս է հետևյալ տեղեկությունը.

«Տպագրության տալով «Կոմունիստական մանիֆեստ»-ի հայերեն թարգմանությունը, մենք պարտք ենք համարում հայտնել հետևյալը.

Այս հրատարակության համար մենք ունեցել ենք ձեռքի տակ երեք տարբեր թարգմանություններ: Առաջինը արված է գերմաներեն վեցերորդ տպարկությունից, Շտուտգարտ (Գերմանիա), 1894 թ., երկրորդ՝ Կ. Պլեսանովի

¹ Ն. Կրուպսկայա — «Հիշողություններ», Պետհրատ, 1929 թ., Մոսկվա, 1933 թ., էջ 308:

հուաներեն թարգմանությունից, Կովկաս 1901 թ. և Երրորդ (տաճկահայկական բարբառով) — Պ. Լաֆարգի ֆրանսերեն թարգմանությունից, Ժընև, հավանորեն 1902—3 թվականին:

Ներկա հրատարակությունը ներկայացնում է գլխավորապես առաջին և երկրորդ թարգմանությունների միացումը՝ ուղղված և խմբագրված համաձայն վերջին գերմանական հրատարակության:

Ժընև, 25 ոգոստոսի 1904¹

Ուշագրավ երևույթ է նաև այն հանգամանքը, որ «Կոմունիստական մանիֆեստ»-ի հայերեն հրատարակության շապիկի վերջին երեսում վ. Ի. Լենինը անհրաժեշտ համարեց իր անունով ցույց տալու հրատարակության հասցեն, որն ապացույց էր այն առանձնակի ուշադրությանը և անձնական հոգստություններ, որ ցույց էր տալիս բոլշևիկների պարտիայի առաջնորդը հայերեն և վրացերեն լեզուներով պարտիական-մարքսիստական գրականության հրատարակմանը:

Այդ հայտարարության մեջ ասված է. «Վրացերեն և հայերեն լեզուներով պարտիական սոցիալ-դեմոկրատական գրականություն հրատարակող «մասնաժողով»-ի հասցեն՝ արտասահմանյան ամեն տեսակ թղթակցությունների, հարաբերությունների և դրամի համար V. Oulianoff, 3 rue de la Colline près Pont Neuf) Geneve—Suisse для „комиссии“: «Դրամ ուղարկելիս, ասված է նույն հայտարարության մեջ, — պիտի նշանակել ո՞ր գրականության, վրացերենի թե՛ հայերենի համար է»:-

«Հրատարակչական մասնաժողովի» (Կոմիսիայի) գծով 1903—1904 թվականներին հայերեն լեզվով լույս ընծայվեցին նաև Կ. Մարքսի «Վարձավաճառականության և կապիտալը» (Շահումյանի թարգմանությամբ), Ֆ. Լասալի «Սահմանագրության էությունը», «ԽՍԴԲՊ երկրորդ հերթական համագումարի ընդունած ծրագիրը» և շատ ուրիշները:

1904 թ. հրատարակված «Կոմունիստական մանիֆեստ»-ը, ինչպես նաև ռուսական առաջին ռևոլուցիայի տարիներին Կովկասում ընկեր Ստալինի դեկավարությամբ կազմակերպված բոլշևիկյան մամուլը և հրատարակություններն իդեալային և քաղաքականորեն դաստիարակեցին հայ պրոլետարիատին, զինեցին նրան՝ պայքարելու մարքսիզմի դեմ: Այդ հրատարակությունները բոլշևիկյան դրոշի տակ համախմբեցին հայ աշխատավորությանը, որը ռուս, վրացի, ադրբեջանական պրոլետարիատի և աշխատավորության հետ միասին, քաղաքական պայքարի դուրս եկավ ինքնակալության և բուրժուազիայի տիրապետությունը տապալելու համար:

Նախասովետական շրջանում «Կոմունիստական մանիֆեստ»-ը հայերեն լեզվով լույս է տեսել ընդամենը երկու հրատարակությամբ, իսկ Հոկտեմբերյան Սոցիալիստական Ռևոլուցիայի հաղթանակից և Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո՝ 11 հրատարակությամբ:

¹ Կ. Մարքս և Ժ. Էնգելս — «Մանիֆեստ Կոմունիստական պարտիայի», 1904 թ. հրատարակություն, Ժընև, Հայաստանի Կ(Բ) ԳԿ գրադարան:

² Նույն տեղում:

Հալերեն լեզվով «Կոմունիստական մանիֆեստ»-ի սովետական հրատարակությունները լույս են տեսել Մոսկվայում 1918 թվին Հայկական Գործերի Կոմիսարիատի և 1924 թվին Հայպետհրատի Մոսկվայի բաժանմունքի կողմից, նրանում 1922, 1924, 1927, 1932, 1938, 1941, 1948 թվերին՝ Հայպետհրատի և Կուսհրատի կողմից:

«Կոմունիստական պարտիայի մանիֆեստ»-ի 100-ամյակի առթիվ ՀամԿ(բ)ԿԿ-ին կից Մարքսի—էնգելսի—Լենինի Ինստիտուտի Հայաստանի բաժանմունքը հայերեն լեզվով ս. թ. փետրվար ամսին լույս ընծայեց «Կոմունիստական մանիֆեստ»-ի մի նոր չքեղ հրատարակություն:

Բացի սովետական այս հրատարակություններից, «Կոմունիստական Մանիֆեստ»-ի հայերեն թարգմանության մի քանի հրատարակություններ էլ կատարվել են արտասահմանում եղբայրական կոմպարտիաների հայկական սեկցիաների կողմից: 1920 թվին լույս են տեսել Ամերիկայում և Բուլղարիայում, 1933 թվին՝ Աթենքում, ֆրանսիական կոմպարտիայի հրատարակությամբ:

1933 թ. Աթենքի այս հրատարակությունը լույս է ընծայվել Մարքսի մահվան 50-ամյակի կապակցությամբ, լայնորեն տարածվել է Ֆրանսիայի և Հունաստանի հայ գաղութներում, հիշյալ հրատարակության առաջաբանը պրել է Ֆրանսիայի կոմպարտիայի աչքի ընկնող ղեկավարներից՝ Ժակ Դյուկլուն:

* * *

Հայ ժողովուրդը՝ զինված «Կոմունիստական պարտիայի մանիֆեստ»-ի անմահ իդեաներով, Սովետական հզոր և բարգավաճ Միության եղբայրական ժողովուրդների հետ միասին Լենինի-Ստալինի բուլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ, առաջ է ընթանում դեպի կոմունիզմի լիակատար հաղթանակը: